




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 184

15 ՄԱՐՏ 1915

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Աթոռանիստ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, առաջիկայ Մեծ Պահոց Կիրակի օրերուն քարոզները թուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն Եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Կղեմէս Վ. Աստուրեանի կողմէ, հետեւեալ նիւթերուն վրայ.

Ա. Կիրակի. Անկրօնութիւնն է ազգիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:— Անոր պատճառները:

Բ. Կիրակի. Անկրօնութեան հետեւութիւններն ու պատիժները:

Գ. Կիրակի. Անտարքերականութիւնն է երկրորդ ազգիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:—Անոր պատճառները:

Դ. Կիրակի. Անտարքերականութիւնը Աստուծոյ դէմ ոճիր մըն է:

Է. Կիրակի. Անտարքերականութիւնը ոճիր մըն է նաեւ ընկերին և նոյն իսկ իր անձին դէմ:

Ծանօթ.—Կիրակի օրերը ժամը 4ին Երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ անմիջապէս յետոյ քարոզ պիտի տրուի:

Անոնք որ կը փափարին Առճաղանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան ղրկելու են:

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀԱԴՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի 40 դահեկանի:
Գաւառներու համար փոսթայի ծախք 10 դահեկան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Հինգերորդ տարի Թ 15 Մարտ 1915 Թիւ 184

«Մերազան Բաժանայապէսն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առձուզանց շարքաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի զատառն, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն սրտացին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարգ. Մէրի Տէլ Վայի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեոքթաճ Հայ-Կաթողիկէ Պատրիարք Գիլիկիոյ
28 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԱՌԵՏՄԱՆ ԱՌԹԻԻ

Իբրեւ եկեմ յոռմն ժամանակին, ա-
ռաճեաց Աստուած գորդիս խոր, որ եղեւ
ի կնոջէ (Դադ. Դ. 4): Պօղոս Առա-
քեալ այս խօսքով աշխարհի նօթճներով
Մարդեղութեան ահաւոր խորհուրդը, որ
տեղի ունեցաւ Մարտ 25ին, Աւետման
օրը, երեք զանազան տեսարաններ կը
պարզէ մեր առջեւ: Յոյց կու տայ մեզի՝
Ա. երկիրը, որ կը պատրաստուի Մե-
սիային գալստեան. Բ. երկինքը, ուր
Հայր եւ Որդի եւ Ս. Հոգին կը վճռեն

վերջ տալ երկրի թշուառ վիճակին. Կ
Գ. Նազարէթի մէկ անկիւնը նետուած
խրճիթ մը, ուր Ս. Երրորդութեան այս
փրկաւէտ վճիռը կը գործադրուի: Դի-
տե՛նք այս երեք տեսարանները, որպէս
զի կարենանք փոքրիշատէ խելամուտ ըլ-
լալ մեծութեան Աւետման տօնին, որ
քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ
հաստատուած է, եւ երկար ժամանակ
քրիստոնէից քաղաքական տարիին առա-
ջին օրը եղած է:

Ա.

Աշխարհիս վրայ մեծ դէպք մը տե-
ղի չ'ունենար առանց նախընթաց պատ-
րաստութեան: Մեսիային գալուստն ալ
որ մարդկային կենաց սկիզբները, դրախ-

տի սեմին վրայ խոստացեր էր Աստուած անկեալ մարդուն, որպէս զի չըլլայ թէ ան յուսահատի, այլ՝ անոր հաւատալով, իր դործերը անոր ապագայ արդեանց միացնելով իր փրկութիւնը ապահովէ, այս գալուստն ալ կ'ըսեմ, այս ամենամեծ դէպքը չէր կրնար տեղի ունենալ անմիջապէս. այլ հարկ էր որ կամաց կամաց նոյնին պատրաստուէր մարդկութիւնը, տակաւ առ տակաւ հասնէր ատենը, լրանար ժամանակը, ինչպէս կը հասկցնէ Պօղոս Առաքեալը ըսելով. Իբրեւ եկն յոռմն ժամանակին :

Եթէ ուշի ուշով նկատենք Ադամէն մինչեւ Աւետման օրը անցած զացած բազմաթիւ դարերը, կը տեսնենք թէ Աստուծոյ այն միջոցին աշխարհիս մէջ ըրած կամ թոյլատրած երեւելի եղելութիւնները, ամէնքն ալ մարերն ու սրտերը Մեսիան լաւ կերպով ընդունելու կը պատրաստեն. անոր յատկութիւնները դործերը կը յայտնեն, անոր խոստումը կը հաստատեն, կը ճշդեն, անոր կեանքին ու մահուան պարագաները կը բացատրեն, անոր իշխանութեան ծառայումը կը դիւրացնեն :

Ադամ, ըստ մարմնոյ ամէն մարդոց հայր ըլլալովը, Մեսիային ըստ հոգւոյ բովանդակ մարդկութեան հայր ըլլալը կը ցուցնէ. Աբէլ, որ Կայենէն կը սպաննուի, Մեսիային իր եղբայրներուն կողմէ անիրաւաբար մահուան մատնուիլը կը յայտնէ. Նոյ, իր տապանովը, կը նախանկարէ Մեսիային հաստատելիք եկեղեցին ուր մօնողները պիտի ազատին մեղքի ջրհեղէղէն. Իսահակ, որ յոնձն կ'առնու հօրը ձեռքով պատարագուիլ, Մեսիային իր Երկնաւոր Հօրը ձեռքով զոհուիլը կը պատկերացնէ. Յով-

սէփ Գեղեցիկ, որ իր եղբայրներուն կողմէ կ'ատուի, քսան արծաթի կը վաճառուի, Պետափրեւէն կը դատապարտուի, իր երկու պատժակիցներէն մէկուն փրկութիւնը և միւսին դատապարտութիւնը կը գուշակէ, ապա բանտէն ելլելով Փառաւորին երկրպագութեան կ'արժանանայ, զամէնքը մահաբեր սովէն կ'ազատէ, Յովսէփ Գեղեցիկ, կ'ըսեմ, իր կեանքին այս դէպքերովը Մեսիային մէկ մանրանկարն է. Յովնան, որ Հրէից ապաշխարութիւն քարոզեց և մերժուեցաւ, կէտին փորը երեք օր երեք դիւշեր մնաց և անկէ ողջ առողջ ծովափը նետուելով գնաց ալլազգիներու ապաշխարութիւն քարոզեց և ընդունուեցաւ, օրինակ էր Մեսիային, որ Իսրայէլացւոց պիտի քարոզէր, բայց անոնք դարձի պիտի չգալին, պիտի իջնէր ապա դերեզման, հողուն ծոցը, երեք օր երեք դիւշեր հոն մնալէն վերջը պիտի յառնէր պիտի քարոզէր հեթանոսներու և անոնք զինքը պիտի ընդունէին և դարձի պիտի գալին. Այս. այս ամէնը Մեսիային օրինակներն էին, Այն առնեալն օրինակաւ անցանէր ընդ նոսա (Կորն. Ժ. 11) : Ասոնք իբրեւ կը հոտուերագծէին ցանկալի Մեսիան :

Նոյն բազմաթիւ դարերուն մէջ տեղի ունեցած աստուածաւիտի գլխաւոր երեւումները դարձեալ Մեսիային շուրջը կը դառնան. Կ'երեւի Աստուած Արքահոգի, կ'ընտրէ զանիկայ, կը զատէ ամէն մարդոցմէ, հայր կ'ընէ մեծ ազգի մը և անոր կը կրկնէ Ագամայ ըրած խոստումը, յայտնելով միանգամայն թէ խոստացուած Մեսիան անոր սերունդներէն պիտի ծնանի և ոչ ուրիշներէ :

Կ'երեւի գարձեալ հետզհետէ Իսահակայ, Յակոբայ, Դաւիթի և աստիճանաբար կը ճշդէ Մեսիային ազգաբանութիւնը որոշ կերպով ցոյց տալով այն տոհմը ուսկից Մեսիան աշխարհ պիտի գայ:

Կ'երեւին նոյն միջոցին Մարգարէներ որոնք յատուկ առանձնաշնորհութեամբ մը ապագային քողը պատուելով կը տեսնեն, կը զննեն Մեսիային կեանքին եւ մահուան ամէն պարագաները այնքան ճշդիւ, այնքան որոշակի որ ոչ ոք ուզղամիտ կարենայ տարակուսիլ անոր ապագայ գալստեան վրայ կամ չճանչնալ զայն երբոր գայ: Դաւիթ, Նսայի, Երեմիա, Եղեկիէլ, Դանիէլ և ուրիշ շատեր իրարու կը յաջորդեն և դարերով առաջ կը յայտնեն, յաւէտ պատմագրի քան մարգարէի պէս, Մեսիային՝ Յուդայի ցեղին իշխանութենէ զրկուած ժամանակ Բեթղեհէմի մէջ կոյտ մօրմէ ծնունդը և անոր պարզաները, Եղիպտոս փախչիլը, հրաշքները, չարչարանքին ամէն մանրամասնութիւնները, Դանիէլի ատենէն չորս հարիւր իննսուն տարի վերջը մեռնիլը, թաղուիլը, յառնելը, հեթանոսները դարձի բերելը, Հրէից խոտաարտութիւնը, կործանումը, թափառումը ևն. ևն.:

Աստուած որպէս զի այս ամէն յայտնութիւնները կէտ առ կէտ կատարուին, միայն Հրէից մէջ չմնան այլ ծառային ամէն ազգերու մէջ ալ, և պատրաստեն զամէնքը Մեսիան ընդունելու, կը կազմէ, կը լուծէ, կը կանգնէ, կը քանդէ Ասորեստանցւոց, Պարսից, Յունաց և Հռովմայեցւոց չորս մեծ պետութիւնները:

Հին պատմութեան այս երկայն դա-

րերը գորդող, դաշտերը, գետերը արիւնով ներկող չորս մեծ պետութիւններուն վրայ հարեւանցի ակնարկ մը ձգողը՝ կոյր բախտին բերումներուն կամ լիկ մարդկային հնարագիտութեան արդիւնք համարի թերեւս անոնց աշխարհաթունդ յաջողութիւններն ու ձախողութիւնները. բայց այն՝ որ ուշի ուշով կը զննէ զանոնք, կը տեսնէ ակներեւ թէ պէնքն ալ եղած են Մեսիայի խոստման պարտ ու պատշաճ կերպով կատարման նպաստելու համար:

Նաբուգոդոնոսոր որ այնքան կը փրայ իր յաղթութիւններով, ուրիշ բան չէ բայց եթէ գաւազան մը. անով Աստուած կը հարուածէ իր սեփական ժողովուրդը, որպէս զի չըլլայ թէ ան կռապաշտութեան մէջ իյնայ և մնայ, և խեղճութիւրէ Մեսիային խոստումը, անով Աստուած կը հանէ այդ ժողովուրդը իր երկրէն, և կը ցրուէ Բաբելոնացւոց մէջ, որպէս զի անոնց ալ հաղորդէ իրեն եղած յայտնութիւնները:

Մի՛ ամբարտաւանիր, Կիւրոս, մէկ գիշերուան մէջ անառիկ Բաբելոնի տիրելուդ, բոլոր թշնամիներուդ յաղթելուդ համար. այդ ամէնը ոչ թէ քու՝ այլ Մեսիային փառքին համար է: Տէրը երկու հարիւր տարի առաջ կոչեր է քեզ քու անունովդ, որոշեր է քու պաշտօնդ, որ է ազատել Հրեաները Բաբելոնի գերութենէն և դարձնել նորէն Պաղեստին, ուր պիտի ծնանի Մեսիան՝ մարգարէից գուշակութեան համեմատ:

Եւ դուն, Աղեքսանդր, դիւցազնդ երեսունեւերկուամեայ, որ փայլակի արագութեամբ արշաւեցիր ամէն կողմ, նուաճեցիր Յունաստանը, Թրակիան, Փոքր-Ասիան, Տիւրքիոյ, Պաղեստինը, Ե-

գիպտոսը, Բաբելոնը, Պարսկաստանը, Բաղտրիան, Հնդկաստանը և Բաբելոնի մէջ հանգչած մեծ արչաւանքներու նոր ծրագիրներ կը յօրինես, օ՛ն, կա՛նգ առայլեւս որովհետեւ լմնցած է գործդ. Աստուծոյ կողմէն քեզի յանձնուած դերը կատարեցիր, պատրաստեցիր այնքան թանձրամիտ ժողովուրդներ Մեսիայի գալստեան, տարածելով անոնց մէջ յունական լեզուն որով պիտի քարոզուին, պիտի գրուին Մեսիային վարդապետութիւնները, դնելով Հրեաները սերտ յարաբերութեան մէջ բարբարոսներու և Յոյներու հետ և առիթ տալով որ անոնք ծանախանքն ասոնց ամէնուն՝ ճշմարիտ Աստուածը և անոր մեծ խոստումը՝ բարոգութեամբ և Ս. Գրոց թարգմանութեամբ:

Բայց Աղեքսանդրի պետութիւնը իրեն հետ գրեթէ քայքայուելով, այլ մասերու բաժնուելով, մատնեց երկիրը անդու խռովութեանց, որոնք նըպաստաւոր չէին Մեսիայի գալստեան:

Ի՞նչ կ'ընէ ուրեմն Աստուած. կը հանէ Հռոմայեցիները, որոնք կը լրացնեն ժամանակը. եկն յռոմն ժաւանակին: Գրեթէ բոլոր ազգերը միեւնոյն օրէնքներով կը միանան իրարու հետ Հռոմայեցւոյ իշխանութեան տակ, և կը խօսին Հռոմի լեզուն, որ Մեսիային եկեղեցւոյն պաշտօնական բարբառը պիտի ըլլայ: Ամէնքը՝ ըլլա՛յ հին աւանդութիւններէ, ըլլա՛յ Հրէից հետ ունեցած իրենց յարաբերութիւններով, կը տեղեկանան մօտալուտ գալստեան այն Փրկչին, զոր Աստուած խոստացեր է մարդկութեան, զոր Հրէից մարգարէները և հեթանոսաց Սիրիլանները նախագուշակել են, որուն ոչնչան եռանդեամբ կը

բաղձար Պղատոն: Վիրգիլիոս կ'երգէ այս Փրկչին վերահաս գալուստը: Օգոստոս կապիտոլիոնի մէջ տաճար մը կը կանգնէ այն կոյսին, որ մայր պիտի ըլլայ նոյն Փրկչին: Մարդկութիւնը ամբողջ սպասումի մէջ է անհամբեր: Գիտութիւնները, գեղարուեստները որչափ կը յառաջանան այնչափ աւելի կը շեշտուի Փրկչի մը պէտքը, այնչափ աւելի զգալի կ'ըլլայ մարդու ինքզինքը նորոգելու անկարողութիւնը:

Եւ յիշատի նոյն բաղմամբիւ դարերուն մէջ ինչ համեմատութեամբ որ քաղաքական վիճակը կը զարգանար նոյն համեմատութեամբ բարոյականութիւնը և կրօնքը կը յետադիմէին, կը ստորնանային և Օգոստոսի ատենը կը հասնէին իրենց յետին աստիճանին և կարծես կը ստիպէին Աստուած որ վայրկեան մը առաջ կատարէ իր մեծ խոստումը:

Նոյն ժամանակամիջոցին բարոյականին եւ կրօնքին կողմը որ նկատենք, շատ տխուր տեսարան մը առջեւնիս կը պարզուի: Կինը կը համարուի իբրեւ կէս մարդ, մարդուն գերի, անոր քմահաճոյքին համար միայն եղած: Տէրեր, ծնողքներ իրենց իրաւունք կը համարին՝ իրենց իշխանութեան տակ եղողները մեռցնել, ծախել, անբաններու պէս բանեցնել: Շատ տեղեր ընտանեաց առնունը կայ՝ ինք չկայ: Նորածին տկար, վատառողջ կամ ազեղ մանուկները ողջ ողջ փոսերու մէջ կը նետուին: Մայրեր իրենց մատաղ զաւակները կը տանին քուրմերուն կու տան որ զանազան մորթեն կամ ձգեն կրակ կտրած կուռքի մը թեւերուն մէջ, որ հոն կենդանի կենդանի տապկուին, եւ իրենք կը կենան հոն

գիտելու այս սոսկալի տեսարանը եւ
ականջ դնելու ահեղ թմրուկին, որ կը
զարնուի իբրեւ մեղմացնելու համար
նոյնին արհաւիրքը: Ամենագորշելի մեղ-
քերու ամէն տեսակները տիրած են աշ-
խարհի չորս կողմերը, եւ որ աւելի ող-
բալին է և սոսկալին, կրօնքով իբրեւ
նուիրագործուած են: Այս ամէն մեղ-
քերը ունին իրենց չաստուածներն ու
չաստուածուհիները, որոնց տօներուն օ-
րերը իբրեւ պարտք մըն է նոյն մեղ-
քերը գործել մանաւանդ մահաններուն
մութ խորշերուն մէջ: Ո՛վ յետին ապա-
կանութիւն: Ճշմարիտ Աստուածը մոռ-
ցուած է առհասարակ, իրմէ զատ ամէն
բան Աստուած եղած է, ամէն բան, ա-
րեւ, լուսին, աստղ, սատանայ, ամե-
նազաղիք կենդանիներ, ամենահասարակ
բանջարներ, սոխ, սխտոր, ևն. ևն.: Ո՛վ
յեթին մայրութիւն մարդկային մօրի:

Մարդիկ, մանաւանդ քիչ մը զար-
գացածները, կը զգան այս ամէն բա-
ններուն անտեղութիւնը և ինչպէս որ
երկայն, մո՛ւթ, մղձաւանջային գիշեր մը
անցնեցած, քունէ յափրացած, կիսովին
արթնցած, սոսիս անդին դառնալէն
յողնած, ձանձրացած հիւանդ մը կը
փափաքի արեւուն ծագելուն, նոյնպէս
ամէնքը կը տենչան Օգոստոսի ժամա-
նակ Մեսիային գալստեան: Դրախտի
աղէաբոյի իրիկունէն ոկսեալ խաւարը
հազարաւոր տարիներ տեւեր էր, լրացեր
էր այլեւս: Անոր վերելը ատեն ատեն
երեւցող աստղերը, աստուածարեալ ան-
ձերը, փաղեր ու անցեր գացեր էին:
Մարդիկ մոլութեանց ու մոլորութեանց
այնքան երկաթթամանակեայ թմրութենէն
ցնորքներէն բոլորովին յափրացած գլուխ-
ներն վեր-վերցնելով, լ՛յս, լ՛յս կը դնեն

ամէն կողմէ: Այս լոյսը, Մեսիան, երկին-
քէն պիտի դալ, հոն ուրեմն ուղղենք մեր
ակնարկը և դիտենք այն տեսարանը,
զոր Առաքեալը մեր առջեւ կը պարզէ
ըսելով. Առաքեաց Աստուած գորդիմ իւր:
(Մնացածը գալ թիւով)

ԱՐՁԱՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂՅՔ ՍՐԲՈՅՆ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Ա. Վաւերականութիւն

Մարդկային միտքը՝ որ ցոյցուումն է սն-
չէջ Արշալոյսին, երբ ամբարտաւանի, կը
թաւալի խաւարի մէջ. և իսկոյն կը փութայ
մերժել լոյսը, ուրանալ ճշմարտութիւնը,
ինքզինքը անոր չափը կարծելով, անոր դա-
տաւորը և անոր գոյութեան ենթակայական
պատճառը:

Այսպէս ամէն դարերու մէջ մոռամոլոր
թշուառացած է հպարտ մարդը, հերետիկոսի
կամ սուտանուն փրիստփայի յորջորջումն ե-
րու տակ: Այլ մանաւանդ ոոյն տեսակի ան-
զգամ ուրացութեանց պագաթնակէտը հասաւ
վերջին երկու դարերու դժոխսպրդիտ յա-
ւակնութիւնը, որով՝ փակեալ ի հաւատոյ,
կեղծաւորութեամբ ստաբանք, կ'ուրանան ամէն
սրբութիւն. ոյնպիսիներ որոնք՝ հարստացած
են և բան մըն ալ չեն գիտեր, այլ կ'այրին կը
մրկին խնդիրներու և հակառակաբանութիւն-
ներու մեջ (Ա. Տիմ. Դ. 2), որպէս զի կա-
րենան վայելել զաշխարհ ու մարմինը՝ որոնց
գերի եղած են:

Այսպէս, ի մէջ ոյլոց, յանուն քննադա-
տութեան, բանասիրութեան ու պատմա-
թեան, այս վերջին ժամանակներու մէջ իբր
ստորակուսական ցոյց տրուեցաւ Պօղոսի Ա.-
ռաքելոյ առ Տիմոթէոս (երկու) և առ Տի-
մոս զրած թղթերուն Պօղոսեան ծագումը,
նա ոււանիկ և առաքելականութիւնը, և,
հետեւաբար, նաեւ կանոնականութիւնը: Այս
թուղթերը, նախ ունենալով եկեղեցւոյ Հո-

վրեներուն պարտականութիւնները, «Հովուական» կոչուեցան:

Ս. Գրքի Մասնաժողովը, որ այս նիւթիս մէջ կարեւոր հեղինակութիւն մը եղած է, Հռոմէական Ս. Ժողովներու նման իշխանութեամբ ճոխացած ըլլալով՝ Բահանայապետներէ, Հովուական Թուղթերու գէմ ի հսուց և հիմա իսկ կատարաբար յարուցուած յարձակումներու պատասխանելու համար քննադատութեան մասին ձեռք առաւ անոնց քննութիւնը, եւ, ուշադիր ուսումնասիրութենէ մը ետքը, սուաւ հետեւեալ չորս պատասխանները:

Ա. Հովուական Թղթոց Թէ՛ Պօղոսեան վաւերականութիւնը եւ Թէ՛ անոնց կանոնականութիւնը ստոյգ են:

Բ. Հասակոտորական ենթադրութիւնը (Hypothèse fragmentaire) լոկ արդիւնք է երեւակայութեան. եւ չի կրնար բնաւ ստնանել այս Թուղթերուն վաւերականութիւնն ու կանոնականութիւնը հաստատող աւանդութեան վկայութեանը:

Գ. Նոյնպէս մեր առաջարկութիւնը չեն կրնար բնաւ ջրել բանասիրական կամ պատմական կարգի զգուարութիւնները որ մեզի կ'առարկուին:

Դ. Վերջապէս, ի հեճուկս նոր քննադատներու, կրնայ՝ առանց վտանգի մոլորութեան հաստատուիլ Թէ՛ այս հովուական Թուղթերը գրուած են Պօղոս Առաքեալի ի Հռոմ առաջին բանտարկութեան (62—64) և սնոր վկայական մահուան (68) ժամանակամիջոցին մէջ:

Մենք այս չորս կէտերուն ստուգութիւնը պիտի աշխատինք ասպոցուցանելու:

Ամենէն էականը վաւերականութիւնն է. և անոր ալ հիմը, ըստ վարդապետութեան յիշեալ Մասնաժողովին, Եկեղեցւոյ հաստատուն և ընդհանրական աւանդութիւնն է՝ որ, բնած է նոյն իսկ առաքելական ժամանակներէ, ինչպէս ասոր կը վկայեն բաղձօրինակ եկեղեցական վաղեմի յիշատակարաններ:

Եւ յիշաւի, կը տեսնենք Թէ այս Թուղթերը ամենահին ժամանակներէն իսկ ամենուն ծանօթ են և յառաջ կը բերուին իբր

Ս. Գրքի մասը, եւ իբր անոնց հեղինակը, առաքեալն Պօղոսը, միշտ Պօղոսը:

*
* *

1. Առաքելական հարց վկայութիւնք. Նախ եւ առաջ լաւ է մէջ բերել Առաքելոց ժամանակ կոչուած Թուականին՝ որ կ'երթայ մինչեւ 150 տարին: Բեղինակաց վկայութիւնները: Այս առաջին յիշատակարանները յիշաւի ցանցսու են ու համառօտ. սակայն եւ այնպէս ցոյց կու տան Թէ Հովուականները այն ատենէն սկսած էին տարածուիլ եկեղեցիներուն մէջ, և Թէ ամէն ոք զանոնք իբր Աստուածաշունչ կը նկատէր, քանի որ ի մէջ կը բերուին ինչպէս Ս. Գրքի ուրիշ մասերը:

Թուոյր Բառնարայ (յամին 70 կամ 96—100). հնագոյն յիշատակարան մը քրիստոնէութեան, իր այլեւալ գլուխներուն մէջ Հովուական Թուղթերու խօսքերը յառաջ կը բերէ:

Նոյնպէս Ս. Կղեմէս Հռոմայեցի († 98) Բահանայապետ, զոր Պօղոս Առաքեալ կը յիշէ իբր նահատակակից (Փելիպ. Դ. 3), իր առ Կորնթացիս գրած Ա. վաւերական Թուղթին մէջ, յաճախ մէջբերումներ կ'ընէ Հովուական Թուղթերէն, մանաւանդ Բ. Իէ. ԼԲ. ԾԵ. Կ. Թիւերուն մէջ:

Ս. Իգնատիոս Աստուածազգեաց մարտիրոս (98—116), իր առ Եփեսացիս, Մագնեսիացիս, Տրալլիանացիս, Հռոմայեցիս և առ Պողիկարպոս գրած նամակներուն մէջ, և Ս. Պողիկարպոսն ալ իր առ Փիլիպպեցիս գրած զանազան գլուխներուն մէջ անդադար այս տեսակ յիշատակութիւններ կ'ընեն, մանաւանդ Պողիկարպոս:

Թուոյր առ Դիոկնէս կոչուած հին գրութեան մէջ կը տեսնուի նոյնը:

Ասոնց ամենուն կրնայ ընթերցողը տեղեկանալ Յունք երեւելի հեղինակին Առաքելական Հարց տպագրութեան մէջ, ի Դուպլինէն 1901:

Գէտք է ասոնց կարգին յիշատակենք իբր միքսաւոր նաեւ զՍ. Յուստինոս վկայ (†163—167), որ իր Տրանսխումքիոն ընդ Տրիխոնկի գործին Թիւ 47ին մէջ բացայայտօրէն բառեր

կ'ընդորինակէ Տիւ. Գ. 4էն, Նոյնպէս նաև Ս. Թէոփիլոս Անտիոքացի (դէպի 180), իր գրոյ մէջ առ Անտղիփոն, և անոնց Բ. ին մէջ Թիւ. 16, կ'ականարկէ առ Տիւ. Գ. 5, իբր բան ստեղծեղիք:

Ասոնք ամէնքը, նոյն իսկ Պօղոսի անունը չյիշելով, այլ միայն Հովուականներու մի քանի խօսքը յիշելով, հաստատած կ'ըլլան որ անոնք Պօղոս առաքեալին են, վասն զի քանի որ անոնց դուռը անոր անունը կայ, ուրիշն նոյն գործով խոստովանած կ'ըլլան թէ անոր են:

2. Յայտնի վկայութիւնք Բ. և Գ. դարերու Հայոց: Պարզ մէջբերումներէն անցնինք բացայայտօրէն հեղինակն իսկ յիշողներուն: (Իրիմուտքի մէջ Մուրադորի Կանոնը (140—155) կու գայ նախ, որ Պօղոս Առաքելոյն թուղթերը համարած ասեն, միւսներուն հետ կը թուէ նաև առ Տիսնոս մի և առ Տիւնոքոս երկու:

Ս. Հիպոլիտոս (+ 235) կը ներկայացնէ Հռոմի վկայութիւնը. իր Ֆիլոգոֆոն մեկնա գրքին մէջ Ս. Պօղոս Առաքելոյն կը վերադրէ Հովուական թուղթերը:

Ս. Իրենէոս (120—202) որ Ասիոյ հետ կը ներկայացնէ զԳաղլիա և Ս. Պողիկարպոսին աշակերտած է, Ընդդէմ Հերետիքեանց երեւելի մատեանին մէջ կը յիշէ Հովուականները իբր Պօղոս Առաքեալի հարազատ թուղթերը:

Գաղղիայէն անցնելով Ափրիկէ, անմիջապէս կը հանդիպինք Տերտուղղիանոսի (160—250) և Ս. Կիպրիանոսի (+ 268), որոնք իրենց գրքերուն մէջ առանց այլեւայլի Ս. Պօղոսի անունով կը յիշեն միշտ այս թուղթերը:

Միեւնոյն վկայութիւնը ունինք Ս. Գրոց ամենահին թարգմանութիւններէն, որոնք անշուշտ մեծամեծ թանգարաններ են վաղեմի եկեղեցւոյ աւանդութեան: Նոր Կտակարանը բնականաբար շատ շուտով թարգմանութիւններ ունեցաւ: Արդ ամէն թարգմանութեանց մէջ Հովուական նամակները Ս. Պօղոս Առաքեալի թուղթերու կարգին

մէջ դասուած են: Ափրիկէի մէջ հալածանաց ժամանակ փոխանակ-ըղեշխի Սատուռնինոս՝ Ալեքիոնի երկտասան մարտիրոսաց մէկուն՝ Ապիրատոսի, որ գլխաւորեցաւ 180ին, կ'ըսէ. «Այդ առաւելի մէջ ի՞նչ կայ» — Ալլիքատոս. «Պօղոսի, արդար մարդուն, մատեաններն ու թուղթերը»:

Նոյն վկայութիւն կը քաղուի նաև ամենահին առորի թարգմանութիւնէն որ առ հասարակ Բէշիթօ կը կոչուի եւ քննադատները Բ. դարու կը վերագրեն. ինչպէս նաև կրկին զպաի թարգմանութիւններէն՝ Մեմփրոսեան կամ Պոհայրեան ի Սուրբին. Եգիպտոս, և Սահիտիկեան կամ Թեքեան ի վերին Եգիպտոս:

Եգիպտոսի մէջ այս վարդապետութիւնը քարոզեցին նաև Կղեմէս Աղեքսանդրացին (+ 217), որ Տիրոջ աստուածային առաքելոյն Պօղոսի կը վերադրէ և սաէպ ի մէջ կը բերէ Հովուականները, եւ աշխարհահռչակն Որիգենէս (185—254), որուն Ս. Գրոց մեկնութիւնը թէեւ կորսուած է, սակայն Հովուականներուն քանի մը կտորներուն մեկնութիւնը պահուած է:

Ի վերջոյ, Եւսեբիոս Կեսարացի (265—340) իր Եկեղեցական պատմութեան մէջ կը յիշէ առ Տիւ. Բ. 2 (Գիրք Գ. Դ. 2), և կը թուարկէ Պօղոսի 14 թուղթերը, իբր ժամանուն յայտնի եւ ծանօթ. և (Գիրք Գ. Դ. 25) Ս. Գրոց կանոնական ցանկը տուած ասեն մեր երեք թուղթերը աստուածաշունչներու մէջ կը դասէ որ ամենէն կ'ընդունուի առանց ընդդիմութեան:

Առանց ընդդիմութեան՝ ուղղափառաց կողմէ ըսել կ'ուզէ Եւսեբիոս: Որովհետեւ եղան հերետիկոսներ որոնք մերժեցին Հովուականները կամ անոնց առաքելական ծագումը անոր համար որ իրենց մուրթութեանց դատաւարտող վարդապետութիւն կը բովանդակեն (Ա. Տիւ. 2. 20-21. Տիւ. Գ. 9-11) գլխաւորաբար Գնոստիկեանք, Երբնեանք. Բատրիդէս՝ Ալլիքանոս կայսեր օրով (117—132), Մարկիոն (155—166): Իսկ Տաւրանոս

(† 180) և Վաղենտինոս որ ի Հռոմ էր 136էն մինչեւ 166, մասնակի կ'ընդունէին:

Ուստի ասոնք ամէնքն ալ կը վկայեն Հովուականներու վաւերականութեան, կամ ընդունած ըլլալով զանոնք իբր Պօղոսի թուրքեր և կամ մերժելով իսկ կը հաստատեն թէ Ս. Գրոց մասն են, քանի որ անոնք Ս. Գրոց այն մասերը կը մերժէին որոնք իրենց մոլորութեանց ընդդիմամարտ կ'ելլէին. ուստի մերժելով ապացուցին ստուգութիւնը և ծառայեցին ճշմարտութեան: Այսպէս յանդիմանեցին զիրենք Ս. Հարք:

Սհա ուրեմն մեր հակառակորդաց գէմանդիմադրելի՛ փաստը, անողոք ապացոյցը ճշմարտութեան, «Յիկեցեւոյ աւանդութիւնը, որ իր ծագումէն ի վեր կը տեւէ անխախտ և ընդհանրական, ինչպէս կը վկայեն, բաղմազան եղանակաւ, վաղեմի եկեղեցական յիշատակարանք»:

ԱՃՈՂ ԱՍՏՈՒԱՄԷՆ (?) ԵՆՈՎԱՅԻ ՈՒՐԱՅՈՒՄԸ

Հայ էջմ. օրագրեր կ'ուզեն ատեն ատեն աստուածաբանել, բաւական սեպելով Աստուած, կրօնք, հաւատք բաւերը գործածել և անոնց շուրջ խորհրդածութիւններ ընել ըսելու համար բարեմիտ ժողովուրդին թէ իրենք ալ կարեւորութիւն կու տան Աստուծոյ ալ, կրօնքի ալ, հաւատքի ալ:

Ազգայնաբութեան աւանդական ազգեցութեան և աղէտի ժամանակ կրօնական զգացումներն ալ ինքնին կ'արթննան ժողովուրդին մէջ, անոր գէմ խոսիլը անտեղի ու անընդունելի կ'ըլլայ. հետեւաբար այն տեսակ օրագրեր, որ չունենալով կրօնքի սլարդ սկզբունք, կը ստիպուին պարագայից բերմամբ անոր վրայ խօսելու, հարկ կ'ըլլայ որ Աստուծոյ, կրօնքի եւ հաւատքի վրայ խօսին զայն հեղինակու քան ջատագովելու համար:

Այս տեսակէն է Բիզանդիոնի 5579 թիւին մէջ երեւցած Անժանօք Աստուածը տիպիզոսով յօդուածը. անոր հեղինակն է երբեմն

հայ աւետարնիկ. (քողոքական) հովիւ, յետոյ յէջմիածին վարդապետ ձեռնադրուած Յովհան Վ. Կարապետեան. նոյն օրը ժամանակի մէջ ալ երեւցաւ յօդուած մը նոյն նիւթին վրայ, ուր Պատ. Փառնակ Իսկէնսէրեան մէջ կը բերէ, և բաւական լաւ կերպով, Աստուծոյ գոյութեան փաստեր: Հակառակ պատուելի մը բռնած ուղղութեան՝ ցաւալի է մեզ ստուգել որ քիչ անգամ հնար է հանդիպիլ գրութեան մը, որ Կարապետեանին չափ հեղինակ ու նախատական ըլլայ Աստուծոյ՝ անոր ջատագովութեան կերպարանքի տակ:

Թողունք արմատական սխալներ, որ կը վխտան հոն, թէ՛ զոր օր. մասնագիտութիւնը քննարկարար նկարագրէ ծայրայեղութեան կը ճանի, իբր թէ գիտութիւնը երբ մասնագիտական է, անպատճառ խտացուցիչ կ'ըլլայ բանականութեան, նիւթացման հասցնելու չափ. իբր թէ հետեւաբար կարելի ըլլայ փորձառական գիտութիւնը՝ առանց վերացողական ըմբռնումի. — թէ՛ քաղաքական կացութիւնը վերնագոյն օրէնք մը ըլլար բարոյականութեան, որ ընդհակառակն առարկայապէս գոյութիւն ունենալով անկախ է այս կացութենէն, ուստի եւ իր սլացքը չթոյլատրող ամէն ձեռնարկ կը դատապարտէ իրրեւ անբարոյացուցիչ և բռնաբարիչ դիւցազնական ձգտումներու. — թէ՛ քննասկան քննարկի պայմաններ կրնան նուիրագործել այդպիսի դատապարտելի ըմբացներ. իբր թէ ամէն պարագայի կարելի ըլլայ տնտեսականին զոհել բարոյականը. — թէ՛ իր կարծիքով տարաբախտ իրականութեան մը յաղթող զննուելու հաւան միայն եւ ոչ իրին պահանջով կրօնական գիտականներ եւ հաւատքի սիրապետող դիմագրաւելու եւ, իբր թէ այդ տարաբախտ իրականութեան հարկը դադրելուն պէս հաւատքի ու կրօնքի պէտքն ալ դադարի: Ուր կը մնայ առաջին կրօնքի մարդավայել բանաւորութիւնը, եւ աստուածագիր իրականութիւնը, անկախ քմահաճոյքը, պատշաճականութիւնը և մտքի խանդարումը:

Թողո՛ւնք որ Աստուծոյ գոյութիւնը չա-
տագովելու տանն՝ նոյնին ցոյցերը կը մերժէ
և գիտութենէ կը վտարէ այն ենթադրու-
թեամբ թէ փորձառական հմտութենէ զուր-
սեականը՝ երեւակայական ըլլայ. իբր թէ
կարելի ըլլայ տեսականը շինել առանց իրա-
կանին վրայ խորոխելու զայն, կամ փոր-
ձառականը կարելի ըլլայ գիտական դրու-
թեան վերածել առանց վերացականի. — թէ՛
այս ենթադրութեամբ նիւթապաշտօնիւնը հա-
ւասֆի հետ կը հաշտեցուի՝ առաջնոյն փորձա-
ռականը և երկրորդին երեւակայականը յատ-
կացնելով. իբր թէ զրական ըլլայ միայն
նիւթը և ինչ որ աննիւթ ու տեսական է՝
ենթադրական ըլլայ. հետեւաբար իբր թէ՛
նիւթապաշտութիւնը մնալով իրականութեան
մէջ, թոյլատու ըլլայ որ զգացումը և
երեւակայութիւնը շինէ զուտ ենթադրական
տեսութիւններ կամ բանաստեղծութիւն մը.
որ Աստուծոյ ու անոր վերաբերեալ տեսու-
թեանց չուրջ՝ հաւասֆ կ'ըսուի. Ըստ այսմ
Հոմերոսի մը ցնորական աստուածներէն տար-
բեր պիտի չըլլար մերինն ալ. — թէ՛ Աս-
տուծոյ գոյութիւնը ժխտելու միայն Փիդի-
քական անկարելիութիւն մը կայ. վասն զի
Աստուած չկայ ըսել կարենալու համար մարդս
խուզարկած պէ՛տ է ըլլայ չի՛զո՞րն անբող
ու չիւսպեցած անոր քողոր գաղտնիներուն.
Իբր թէ նոյն իսկ փորձառական բներեւոյթ-
ներ ընդունելու համար անոնց ամէն գաղտ-
նիքներուն վերահասու ըլլայ գիտութիւնը.
զոր օր. լոյսը՝ որ ամենէն ծանօթն է. և թէ
Փիդիքականին մէջ չի բաւէ պատճառակա-
նութեան սկզբունքը, որով միայն արդիւն-
քէն պատճառ և պատճառէն արդիւնք կ'երթե-
ւեկէ բնագիտութիւնն իսկ հակառակ իր մէ-
ջը տիրող փորձառականութեան. — թէ՛ ըստ
այսմ ներեալ ըլլայ Աստուծոյ գոյութիւնը
ուրանալ կամ գէթ անոր մասին տարակու-
սիլ. մանաւանդ թէ տարակոյսը հարկ մը ըլ-
լայ, ըստ որում չկն չարակաւոր անոնք որ նաեւ
չեն մտածեր. իբր թէ լոյսին առջեւ ալ բաց
աչքով խորխափելը խելքը զուլը մարդուն
գործ ըլլայ. — թէ՛ անծանօթ Աստուծոյ ծը-
նունդը կը ակսի մոլորեալ մտայնութեանց մեջ,

ուր երեւակայութիւնը անպերհեւ անդին կը փո-
խարէ հաւասֆը. իբր թէ աստուածագիտու-
թիւնը կամ աստուածապաշտութիւնը գէթ
նախնականապէս չափանիշ ըլլայ ագիտու-
թեան ու խաբուած մտքերու, մինչդեռ տիե-
զերքի և անոր մէջ անցնող դարձող բներե-
ւոյթներու պատճառականութեամբ չղթայ-
ուած կապակցութիւնը քանդել ուրացութիւն
է նոյն իսկ փորձառական գիտութեան. եւ
տիեզերքի կապակցութիւնը կարելի՝ չէ որ
մնայ և ըմբռնուի առանց վերջին մեծ պատ-
ճառին, որ Աստուած կ'ըսուի. Որքան իրաւ
է իմաստունին խօսքը. Զի ընդունայն էին
ամենայն մարդիկ քննութեամբ յորս եր աս-
տուածանգիտութիւն (Իմ. ԺԳ. 1).

* *

Սակայն շատ աւելի խայտառակ եւ ծաղ-
րական է Անդոյ Աստուծոյ մը ենթադրու-
թիւնը, զոր շատ մը աստուածաբաններու (?)
կը վերաբրէ և կը թոյլատրէ երբ Աստուծոյ
գոյութիւնը պիտի պաշտպանէ:

Աստուած մը, որ անոյ գոյակ մըն է եւ
աճելու պէտք ունենալուն համար բնակա-
նաբար հասած չէ կատարելութեան գազա-
րին՝ ինչպէս կրնայ Աստուած ըսուիլ. Ընդ-
հակառակն ինչպէս Աստուած չըլլար նոյն
իսկ այն գաղաթը, որուն հասնելու համար
այդ Անդոյ Աստուածը իր իսկ վերելքովը կ'եր-
կարէ կատարելութեան սանդուղը իրմէ, առ-
տուածութենէ անդին. կատարելութեան վեր-
ջակէտ մը. որ իր ստորեւ երկարող սան-
դուղին վրայ կը դնէ զԱստուած ու մարդիկ
իբրեւ հաւասարապէս յառաջացած ընդունակ
գոյակներ, ինչ անուամբ որակելու է. Եւ
ինչպէս մարդուն ալ Աստուած անունը չտալ
երբ առ անոր հետ համընթացող մըն է դէպի
կատարելութիւն. յայտնի է թէ այս պարա-
գային աւելին կամ նուազը պահանջած ըլ-
լալով տեսակի փոփոխութիւն չի մուծեր:

Ահա ինչպէս հազելիան քարձր վիճակի հաս-
նելու համար կը թելադրուի Անծանօթ Աս-
տուծոյ նախատական ըմբռնում մը:

* *

Այդ ըմբռնումը կը շեշտէ նոյն վարդա-
պետը երկրորդ յօդուածով Եհովայ Աստուածը

տիրապետով նոյն լրագրին մէջ (թ. 5585), ուր ծանրանալով մանաւանդ Հին Կտակարանի Աստուծոյն եւ Քրիստոսի Աստուծոյն բացարձակ տարրերութեան վրայ, երկուքն ալ ուրոյցած կ'ըլլայ:

Վասն զի Աստուծոյ վրայ տեսութեան հիմնակէան է իրեն համար թէ, անոր դադարը՝ մտքերու գիւտը, գաղափարի ծնունդը ըլլայ, հոգեւոր փորձառութեան ստեղծագործութիւնը. որով կը սպասենք որ յօդուածագիր վարդապետը վերջացնէ իր դադարը Աստուծոյ վրայ այն նախադասութեամբ զոր յառաջացուցեր են դրականապաշտք. Մարդն եւ որ գիտնում սեղծած է եւ ոչ Աստուծոյ գեղարդ:

Աստուծոյ գոյութեան հին ապացոյցները մերժուելէ ետք. խորհող սեփեւ կ'ըսէ ինքը, սխառ եւ անձանօր Աստուծոյ ճանկնալու համար տոհմասարակ դիմել հոգեւոր փորձառութեան: Ինչո՞ւ համար արգիօք բնագիտութեան մէջ, որ հիմնապէս պատճառականութեան սկզբունքին վրայ կոթնած է, այդ հոգեկան փորձառութեան չի ձգուիր երկրորդական պատճառներու զոր օր. ելեկարութեան, մագնիսութեան, ձգողութեան եւն. գոյութիւնը. և կ'ուզուի անպատճառ անոր պարտադրել պատճառաց պատճառին գոյութիւնը, առանց որոյ անբմբռնելի է տիեզերքի հրաշալի կարգն ու կապակցութիւնը և երկրորդական պատճառներու իսկ շարակցութիւնը: Այդ հոգեկան փորձառութիւնը անշուշտ պիտի չուղէ օրէնք առնուլ բնագիտութենէ՝ չվտանգելու համար այդ գիտութիւնը և անոր փորձառական արժէքը, որ հիմնապէս պատճառի և արդիւնքի գործնական ցոյցն է. ըսել է ինչ որ աններելի է երկրորդականներու համար՝ ներելի պիտի ըլլայ առաջին պատճառին համար, առանց որոյ եղել և ոչինչ որ ինչ եղել:

Արդի ժամանակաց մեծագոյն իմաստասերը (?) այդպէս ուզած է. Բանդ յաջողէր է կ'ըսէ քանզի Աստուծոյ գոյութեան հին ապացոյցներէն հակաբանական, ֆիզիքսական ու փիլիսոփայական կոչուածները: Ո՛չ բարեկամ, ան կրցած չէ քանզի, վասն զի Բանդի բրիչ տիեզերքի հիմերուն չկրցաւ

հասնիլ և ոչ պատճառականութեան տիրող օրէնքը փլցնել, անոր գրիչը փորեց վիճ մը գաղափարապաշտութեան (Idéalisme) որ մարդկային մտքի մութ փապար մը եղաւ, ուր անոր հետեւողները ճշմարտութիւնը կարծիքի հետ շփոթեցին և մտքի քունը հոչակեցին, իսկ բնագիտութիւնը այդ քնացող մտքին զառանցանքը կամ շատ շատ բանաստեղծութիւնը նկատեցին. Ասոր հակառակ բնագիտութիւնը պիտի մնայ իրականին վրայ հիմնուած բանաւոր հայեցողութիւնը այն վերին սկզբունքներուն, որոնք ամէն գիտութեանց, նոյն իսկ փորձառականներուն օրէնքը կը կազմեն: Տիեզերաբանականէն ոչ նո՛ւազ անհերքելի կը մնան էականականներն ու վախճանաբանականները, որովհետեւ այս վերջինները տիրող պատճառականութեան կը վերածուին, իսկ առաջինները գիտութեան պայման են այնպէս որ նոյն իսկ փորձառականին մէջ պիտի չկարենար միաքերելու տեսութիւն մը, եղբակացութիւն մը գաղափարել եւ նոյն իսկ յօդուածագիր վարդապետը պիտի չկարենար խորհիլ ու գրել. Ս'ենք խորհելու համար գիտնական ծանօթութիւն մը ստանալու ենք և բացատրելու համար պէտք ունինք վերացումի (abstraction) և սա ինքնին էականական սկզբունքներու կը տանի, ինչպէս աչքը դոյնի, ունչքը հոտի, լսելիքը՝ ձայնի եւ իւրաքանչիւրին յատուկ գործողութիւնը իր բնական ընթացքին մէջ դնելու համար:

* *

Չ'արժեք աւելի ծանրանալ ասոր վրայ, վասն զի չարագոյն մոլորութիւններ կը բարդէ Աստուծոյ մասին եւ կը հասնի նախատական ուրացութեան մը Նիովայի. Եւ զարմանալին այն է որ Նիովայի աստուածաշնչական բմբռնումը Հրէից ազանդաւոր եւ փարիսեցիական ըմբռնումներու հետ այլայլելով կամ նոյն ինքը Ս. Դրքի տուած գաղափարը իր տեսակէտով դատապարտելու միջոցին՝ կը թոյլատրէ ամէն ուրիշ այլազան գաղափարներ և անոնց գոյութիւնը փայտեղական երեւոյթ մը կը համարի: Ինչո՞ւ այս հակասութիւնը:

անոնց ճակատագիրն է այդ, որոնք բարդ ու ճոռճմ գրուածքով մտքերն են ամէն անցածը խճողելով կը յանդգնին թէ հնար ըլլայ խեղդել ճշմարտութիւնը: Մնացածը ուրիշ անգամ:

ՏՐԱՊԻԶՈՆԵՅԻՔ ԵՒ ԻՐԵՆՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Մինչ Կ. Պոլսոյ մէջ Հայ Կաթողիկէ հասարակութեան վարչական գործերը տակաւ առ տակաւ սկսած են կանոնաւորուիլ, անդին գաւառական շատ մը քաղաքներու մէջ տակաւին կը շարունակուին ապօրինութիւններ եւ կը մնան ի հեճուկս հոգեւոր իշխանութեան կազմուած ժողովներ: Եկած է այլ եւս ժամանակը որ վերջ տրուի այս ամէնուն եւ մէջտեղէն վերնայ դալթակցութիւնը, խապա չվերադառնալու պայմանաւ:

Տրապիզոնի Հայ Կաթողիկէ համայնքը ամենէն աւելի խօսեցնել տուաւ իր ծայրայեղութիւններով, ուստի պէտք է մասնաւորապէս փոյթ տարուի որ ժամ առաջ վերահաստատուի հոն կարգ եւ կանոն տեղւոյն օրինաւոր եպիսկոպոսին ձեռքով: Շատեր դուցէ կարծեն թէ ամբողջ Հայ Կաթողիկէ հասարակութիւնն է որ հակառակ է Տրապիզոնի մէջ իր եպիսկոպոսին, մինչ իրականութիւնը այն է որ շատ քիչեր են միայն հակառակորդ եւ ժողովուրդը ստուար մեծամասնութեամբ կ'ընդունի եւ կը յարգէ իր Հայրապետը:

Քանի մը տող բացատրութիւն բաւական է դայս հաստատելու: Արհիպատիւ Յովհաննէս եպիսկոպոս Նազլեան, վիճակաւոր է Տրապիզոնի և յարակից վիճակացն, այսինքն Սամսոնի, Մարգուանի, Ամասիոյ, Հավդայի եւ բոլոր Սեւ Մովու օսմանեան եղերքը զըտնուող քաղաքներու՝ եթէ նոյն տեղերը Կաթողիկէ Հայեր կան: Նազլեան Գերապոյծառ փոխ ի փոխ այցելեց իր վիճակին մաս կազմող քաղաքները, և ամէն տեղ պարտ ու պատշաճ կերպով ընդունուեցաւ, շատ մը վիճակային օգտակար դործեր, ի կատար ածեց և իր ներհուն քարոզներով մխիթարեց

հաւատացեալները: Գնաց նաև 1913 Յունուարի մէջ Տրապիզոն՝ Թեմին աթոռանիստ քաղաքը, հոն եւս անձամբ իսկ ստուգեց թէ ժողովուրդին ամենամեծ մասը ճշմարիտ Կաթողիկէ է եւ հնազանդ իր հովիւին: Հակառակորդ է միայն վարչական ըսուած ինքնուկոյ ժողով մը իր քանի մը արքանեակներով: Քանի որ Սամսոնի, Մարգուանի, Ամասիոյ և Տրապիզոնի ժողովուրդին դրեթէ ամբողջութիւնը կը ճանչնան ու կ'ընդունին իրենց եպիսկոպոսը, այս վարչական ըսուած ժողովը իրաւունք չունենար այլ եւս յանուն Հայ Կաթողիկէ համայնքին խօսելու եւ եպիսկոպոսին դէմ գործելու: Այս վարչական ժողովը ճանչցնելու համար պէտք է ըսել թէ կը գանուի Տիար Պետրոս Մարիմեանի ատենապետութեան տակ:

Տրապիզոնի հշմարիտ Հայ Կաթողիկէները շատ համբերեցին և վերջապէս ասկէ 6—7 ամիս տուա՞յ բազմաստորագիր աղերսագիր մը տուին կուսակալին խնդրելով որ պէտք եղածը ընէ որպէս զի Նազլեան Գերապոյծառը դայ և իր եպիսկոպոստարանը նստելով ձեռք առնէ հասարակութեան հոգեւոր գործերը եւ վերջ տրուի ապօրինաւոր վարչական ժողովին:

Դժբախտաբար սակայն այս աղերսագրին հետեւանք չտրուեցաւ և վարչական ըսուած ժողովը շարունակեց մնալ: Իսկէ այս պարոնները արժանապատուութիւն ունենալին և ինքնաբերաբար հրաժարէին, տեսնելով հասարակութեան անվստահութիւնը իրենց վրայ:

Ներկայիս այս է Հայ Կաթողիկէ հասարակութեան վիճակը Տրապիզոնի մէջ: Այն օրը որ դադրի արդի ապօրինաւոր վարչական ժողովը, այն օրն իսկ ամէն բան խաղաղ եւ հանգիստ կ'ըլլայ նորէն և ամէն ոք անձկանօք կը սպասէ Նազլեան Գերապոյծառի ներկայութեան իր աթոռանիստ քաղաքին մէջ:

Մանաւանդ թէ Տրապիզոնցիք կը մտութեն որ այդ բարեբաստիկ օրը շատ չուշանայ, վասն զի Նազլեան Գերապոյծառի Տրապիզոն հասնելովը կը յուսան թէ իրենց բարի ակնկալութիւններն ալ պիտի սկսին կամաց

կամաց իրականանալ։ Այդ ակնկալութիւն-
ներուն գլխաւորն է եկեղեցւոյ շինութիւնը։

Տրապիզոնի եկեղեցւոյ շինութեան հարցը
երկար տարիներէ ի վեր կայ և կը մնայ։
Հանգուցեալ Պօղոս եպիսկոպոս Մարմարեան
ասկէ 25 տարի առաջ ձեռնարկեց անոր, որ
մինչեւ այսօր կարելի չեղաւ ի գլուխ հանել։

Մարմարեան եպիսկոպոս յաճախ կ'ըսէր.
«Այս եկեղեցին ես պիտի չկրնամ աւարտել,
ոչ ալ իմ յաջորդս, այլ յաջորդիս յաջոր-
դին է որ պիտի վիճակի այդ երանութիւնը»։

Ստուգիւ իր յաջորդը Ստեփաննոս եպիս-
կոպոս Արիկեան, հակառակ ջերմ ջանքերուն,
չկրցաւ առաջ տանիլ եկեղեցւոյ շինութիւնը,
նր և այժմ Նազրեան Գերապոյթառէ կը սպա-
սուի այդ շինութեան կատարումը, ըստ սըր-
բակեաց Պօղոս եպիսկոպոս Մարմարեանի
խօսքին։

Տա՛յր Աստուած որ այս խիստ գովելի փա-
փաքը ի մօտոյ կարելի ըլլար իրականու-
թեան շաւղին մէջ գնիլ, ի փառս Ս. Եկե-
ղեցւոյ և ի յառաջագմիութիւն Թորգոմեան
տոհմին։

Պ. Դ.

Պոնսացի

ԿԱՐԳԻՆԱԼ ՆԻՒՄԸՆ

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ԵՐԱԶԸ

Բ.

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ՀՈԳԻՆ

Քննեցեր էի. և այժմ ինքզինքս նորոգ-
ուած կը զգամ։ Տարօրինակ նորոգում մըն
է այս. կը զգամ, ստուգիւ, անբացատրելի
հանգստութիւն մը, ազատութեան ազդե-
ցութիւն մը. իբրեւ թէ ե'ս վերջնապէս ես
եմ, և իբրեւ թէ ե'ս մինչեւ հիմա ես չէի
բնաւ։ Ի՞նչ հանդարտ է ամէն բան։ Այլեւս
չեմ զգար ժամանակի ընթացքը. մէկ վայր-
կեանը միւսէն չի տարբերիլ ալիւս։ Այլ չեմ
լսեր ո'չ հատկիւնալ շունչս, ո'չ երակիտ հազ-
շտապ թնդիւնը։

Երազ տեսայ. այո՛. — մէկը քնքշօրէն

արտասանեց սա խօսքը. «Մեկնեցաւ»։ Եւ
առեւ հառաչեցին։ Յետոյ, եւ հաւատտեաւ,
լսեցի որ քահանայ մը կ'ըսէր. «Օգնեցէ՛ք»։
և ծնրադիր աղօթեցին։ Ինծի կ'երթա՞ի թէ
տակաւին կը լսեմ. բայց ձայները տակաւ
առ տակաւ նուազ կը հասնին ինծի, իբրեւ
միշտ ընդարձակուող անջրպետի մը մէջէն։

Ահ, ի՞նչ է պատճառը սա զգացածիս։
Ի՞նչ է այս բաժանումը. լուութիւնը մինչեւ
հոգւոյս խորը թափանցանց կը միտէ միայ-
նութեան տպաւորութիւն մը։

Եւ այս խո՛ր, այս հեշտալի և քաղցր հան-
գիստը զերծ չէ դառնութենէ ու վիշտէ, ու
որովհետեւ անբացատրելի իրադարձութեամբ
մը, իմ խորհուրդներս դէպի իրենց ակնադ-
բիւրը կը մղէ, այնպէս որ ստիպուած եմ ես
իմ վրաս ինչալու և անկէ իմ կեանքս հայ-
թայԹիլու, ուրիշ նեցուկի և ուրիշ անունդի
չգոյութեան պատճառաւ։

Մեռա՛ծ եմ թէ կենդանի։ Մեռած չեմ,
որովհետեւ տակաւին մարմին ունիմ. եւ ի-
րօք, իբրեւ ստոյգ գիտեմ որ, իւրաքանչիւր
կազմած իր անդը կը գրաւէ առաջուան պէս,
միւսներուն հետ յօրինելով անթերի համա-
գրութիւն մը, որ զիս մարդ կ'ընէ։

Անշուշտ, եթէ ուղեւնամ, կրնամ իմ իւ-
րաքանչիւր մասս շարժել։ Սակայն անհնար
է որ փորձով ցոյց տամ թէ կրնամ նոյնը ը-
նել։

Տարօրինակ բան է այս, չեմ կրնար շար-
ժել ո'չ ոտքերս, ո'չ ձեռքերս, չեմ կրնար
մատներս շրթունքներու մօտեցնել, ո'չ ալ
կոպերս բանալ մարմին ունենալս հաստա-
տելու համար։ Ի՞նչ զիրքի մէջ ալ ըլլալս
կ'անգիտանամ. — չեմ գիտեր բնաւ որ ոտքի՛
վրայ եմ թէ նստած, ծնրադի՛ր թէ պառկած։

Ահա ինչ որ գիտեմ, առանց պիտանալու
թէ ի՞նչպէս գիտեմ. այս ընդարձակ տիե-
զերքը զիս կը թողու, կամ ես զայն կը թո-
ղում. եւ երկուքնէս մէկը յափշտակուած կը
տարուի լոյսի կամ փայլակի թեւերուն վրայ,
և արդէն իրարմէ բաժնուած ենք միլիոնա-
ւոր մոմներով։ Արդեօք այս յանկարծակիս
բաժանումը միջոցի չափելի քանակութեամբ
կը կատարուի, արագութեան և ժամանակին

հետ երկնալուով և բազմապատկուելով . ո՛ւր արդեօք պիտի կտրեմ անցնիմ անհունը , ան-վերջ ստորաբաժանմամբ մը , գտնուելով սահ-մանաւորէն անսահմանին , ձգելով երթալով այսպէս ինչ որ միջոցի գաղափարը կը պա-րունակէ :

Հրաշալիք մըն ալ . մէկը զիս լայն ձեռ-քով մը կը բռնէ . բայց ոչ մարդիկներու ը-րած կերպով . Ասիկայ գողտր և միակերպ ճնշում մըն է իմ նուրբ էութեանս ամբողջ մակերեսին վրայ . որպէս թէ այս կերպով բռնուելու յարմար գունդ մըն եմ : Եւ այս փորձը ինծի կը հասկցնէ որ ես ինքզինքս չեմ շարժեր այլ մէկը զիս կը տանի :

... Ներգաշնակութիւն մը կը լսեմ . բայց ստուգիւ չեմ կրնար ըսել որ այս երաժշտու-թեան երգերը կը լսեմ թէ կը շօշափեմ կամ կը հաշակեմ :

Օ՛հ , ինչ սրտադրաւ գեղգեղ :

Հրեշտակը

Պաշտօնս վերջացաւ ,

Դործս աւարտեցաւ .

Բեռնս ուսս առած

Կու գամ արդ այդ յարկն

Յաւիտենական .

Զի պսակն է շահուած :

Աշխարհ

Հայրըս երկնաւոր

Ինծի յանձնեց այս

Էսին երկրաւոր

Մենդեան օրէն իսկ ,

Որ զինքը փրկեմ ,

Եւ արդ փրկուած է :

Աշխարհ

Այս կաւէ տղան

Ինծի արուեցաւ ,

Որ զինքը ուղղեմ ,

Վշտաց միջոցաւ ,

Երկինքը տանող

Անձուկ համբուն մէջ :

Աշխարհ

ՀՈՂԻՆ

Ասիկայ մէկ անդամն է այն սքանչելի էակներու ընտանիքին , որոնք , միլիոնաւոր դարեր առաջ , երբ դեռ աշխարհները գոյու-

թիւն չունէին , Աստուծոյ դահին առջեւ կը կենային : — Ինք մեզք գործած չէ բնաւ , այլ այն գրեթէ անհուն շրջաններուն մէջ հզօր , մաքուր և երկնային կեանք մը վա-յելած է : Աստուծոյ երեսը սեւած է անանց քողի , անոր ծառայած է բուն և հիասքանչ սիրով . ճշմարտութեան յաւիտենական աղ-բերէն խմած է : — Ա՛հ , նորէն կը սկսի :

ՀՐԵՇՏԱԿԸ

Ո՛վ Տէր , ո՛րչափ սքանչելի ես բարձրու-թեանց ու խորութեանց մէջ . բայց որչափ աւելի սքանչելի ես մարդուն մէջ : Ի՛նչ սի-րով , ի՛նչ քաղցր և համոզիչ ուժով կը յաղ-թես Դուն իր մտղէն խիստ սրտին , և սուր-բեր կը կազմես ուզածիդ չափ : որպէս զի հպարտ հրեշտակներուն պարսպ թողած ա-թոռները գրուեն :

Երկրի վրայ նետուած էր , իբր խեղճ ու զորմեղի մանկիկ մը , իր նախածօր արիւնով ապականուած , իր ամբողջ էութեամբը զըր-դուած , ստոսնած և վատթարացած , և կը կրէր սրտին մէջ սոսկալի գեւ մը , որ , ա-ռանց իրեն բնութճանկից ըլլալու , իշխա-նութիւն ունէր իր նորածին հոգին կապելու և զէպի չարս մղելու :

Այն ատեն երկինքէն զրկուեցայ որպէս զի հաւասարակշռութիւն հաստատեմ ճշմար-տութեան և մեղքին միջեւ , որոնցմէ մին կամ միւսը պիտի յաղթանակէր իր հոգւոյն մէջ :

Երկար և անընդհատ եղաւ պատերազմը զոր մղեցի , որովհետեւ որոշած էի շահիլ այս հոգին որ մահուան սպառնալիքին տակ կը գտնուէր . այս հոգին , որ իր առաջին վիճա-կէն ինկած էր , եւ , ամէն բանէ զրկուելէն ետքը , գնուած էր այնքան բարձր գնով :

Օ՛հ , ի՛նչ յարափոփոխ և այլազան տե-սարաններու շարք մը եղաւ այս կեանքի պէս տխուր և երկայն կռուին պատմութիւնը , հիւսուած յոյսերով և վախերով , յաղթա-նակով և արհաւիրքով , յանդգնութեամբ և ապաշխարութեամբ :

Եւ չնորհը որչափ պատրաստակամ , համ-բերատար և առատ եղաւ , անոր կարօտու-թեան ժամերուն մէջ , զայն վերականգնելու և անոր առաջնորդելու համար :

Ո՛վ մարդ, ո՛վ երկնի եւ երկրի տարօրինակ բաղադրութիւն: Կը տեսնենք քաւ մէջդ մեծվալեղութիւնը մինչեւ անարդու-թիւն ստորնացած — թունաւոր հունտ սուղ հոտաւէտ ծաղիկ մը, կարծես ինչպիսի տպա-կանելու միայն արժանի — էակ մը, որուն մէջ տկարութիւնը զօրութեան կ'իշխէ: Եւ որ այն աստեղ աւելի ոճիւրի եւ ամօթի կը մօտենայ երբ փառաւոր զորք մը տեսնէ:

Ի՞նչպէս մեզի պէս եթեւային բնութիւն-ներ կրնային ըմբռնել հողիէ եւ կառէ բազա-դուած էակ մը, եթէ մեր պաշտօնը չըլլար անոնց հոգ տանիլ: — Եթէ հրեշտակը մար-դուն միացած չըլլար անոր մահկանացու կեանքին օրերուն մէջ:

Ահ, պահապան հրեշտակը աւելի լաւ կը ճանչնայ փրկուած ցեղը, և Սերոբէին, իր փառքին մէջ, զայն սիրելէն և ճանչնալէն աւելի կը սիրէ:

ՀՈԳԻՆ

Հիմայ ստուգիւ պիտեմ թէ վերջապէս մարմինն թողուցի: Եթէ դեռ եւս երկրաւոր բան մը ունենայի, պիտի չկարենայի այս շեշտերը լսել եւ չարշտել իբրեւ Աստուած այն, որուն ձայնը այնքան ներդաշնակ էր: Բայց այժմ սիրտս այնքան ամփոփ է, այն-քան հանդարտ եմ և ինծի տէր, այնպիսի գոհունակութիւն մը կը զգամ եւ օժտուած կը պահեմ ինքզինքս այնքան թափանցող եւ քաջադատ զգացումով որ ոեւէ փորձութիւն չի կրնար վրաս ազդեցութիւն ընել: Ասկէ զատ, սա մտածումը թէ ես այսպիսի սրբու-թեան մը բազուկներուն մէջն եմ, ինծի ա-մենափոքր երկիւղ մը չ'ազդեր:

ՀՐԵՇՏԱԿԸ

Ամէն գովութիւն անոր որուն վսեմ արա-մազրութիւնը յեօինները առաջին եւ առա-ջինները յետին կ'ընէ, որ աղերսարկու բան-տաւեայր կ'ազատէ, որ իրենց աթոռներէն կը տապալէ այն ամբարտաւան անդրանիկ-ները, ապառաժ հրեշտակները, որ Մարիամը երկնից Ղշխոյի տիտղոսին կը բարձրացնէ, մինչդեռ Արուսեակը լքուած եւ տառնց նե-րումի կը մնայ:

Թարգմանեց ԱՐՁԱՆ

(Շարակակցի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Արհի.

Ժիւլ Ժոզէֆ Սէնէզ, տիտղոսաւոր եպիս-կոսոս Նիկոպոլոսյ և Աւսքելական Նուիրակ Պատուոյանտի որ Հարաւային Ափրիկէի մէկ երկիրն է, Ս. Քահանայապետին հասցուցեր է Պատուոյանտին թաղաւորին կամ վեհա-պետին հետեւեալ նամակը, զոր Թարգմա-նաբար հոս կը գնենք:

Մացիեկ, 26 Մայիս 1914

Մեր Սրբազան Քահանայապետ Հայրը

Ողջոյն Զեզի,

Բուական ատեն կայ որ իմացայ թէ Պա-տուոյանտի եպիսկոպոս Սէնէզ Գերապայ-ճաւը Սուրբ Քաջաքը այցելելու միտք ունի, և այս հակիրճ նամակը Զեր Սրբութեան ուղ-ղելու բուն փափաք մը զգացի:

Սրբազան Հայր, աղէկ դիտեմ թէ այն բազմաթիւ որդիներուն մէջ, որոնց հայրն էք, Աստուծոյ շնորհքով, աշխարհիս ամէն կողմը, ես ամենէն փոքրն եմ և ամենէն ա-նարժանը: Բայց քաջալերուելով Հօր մը իր գաւակներուն հանդէպ ունեցած մեծ սէրէն, որ անոր թոյլ չի տար երեսէ ձգել նոյն իսկ ամենէն տրուպը, կը խնդրեմ, շնորհք ըրէք որ մօտենամ Զեր ոտքերուն որդւոյ մը պար-պութեամբ և Զեզի ըսեմ: Հա՛յր, ողջոյն Զեզի:

Թո՛յլ առէք. կ'աղաչեմ, Սրբազա՛ն Հայր, թո՛յլ տուէք որ Զեզի ըսեմ թէ չորս տարիէ ի վեր Աստուծոյ մեծ շնորհքովը լսեցի իր կոչը և անոր հնազանդեցայ, կաթողիկէ եղայ հրաշալի կերպով մը:

Այն ատենէն ի վեր սկսայ վայելել եր-ջանկութիւն մը, որ առաջ ծանօթ չէր ինծի, և որուն անարժան էի, այնպէս որ անկարող կը զգամ ինքզինքս Աստուծոյ շնորհակալ ըլ-լալու ինծի ըրած բարութեան համար:

Սրբազա՛ն Հայր, ներեցէ՛ք որ ըսեմ նաեւ թէ այս երկրին մէջ, զոր ես կը կառավարեմ, Աստուծոյ մէկ թաքուն խորհուրդովը, կը տեսնեմ թէ այն գործը որ իմ մեծանուն հօրս Մոռյէսոյէի թագաւորութեան ժամանակ

հազիւ սկսած էր Անարատ Յղացիւ Մա-
րիամու նուիրեալ Կրօնաւորներուն ձեռքով,
օրէ օր կը բարգաւաճի եւ վարմանալի կեր-
պով կը տարածուի:

Մեծապէս կը փափաքիմ եկեղեցիներ հիմ-
նել ուր որ օգտակար կը համարուի. բայց
դաշտը ընդարձակ է եւ ժաւկները՝ շատ սա-
կաւաթիւ:

Սրբազան Հայր, խորին խոնարհութեամբ
կը խնդրեմ Ձեզմէ որ ինծի քահանաներ զըր-
կէք: Ներեցէ՛ք, Սրբազան Հայր, աղաչանք
մըն ալ աւելցնեմ, հրաւիրելով Ձեր ազօթքն
ու օրհնութիւնը իմ եւ իմ ժողովրդեանս վրայ,
որպէս զի Աստուած իր ողորմութեամբ ու-
ղիղ ճամբան տանի զայն:

Այս է իմ աղաչանքս եւ խնդրանքս:

Թո՛ղ տուէք որ կոչեմ ինքզինքս. Ձեր
Սրբութեան ամենախոնարհ որդին

Ն. ԿՐԻՃՅԻԿ Լ. ՄՈՍՈՅԷԱՆՆ ԵՒ
ՎԵՏԱՊԵՏ ՊԱՍՏԵՂՈՆԵՐՈՒ

* * * Փետր. 7ին, կիրակի օրը, Սրբազան
Քահանայապետին հրամանին համեմատ Եւ-
րոպայի ամէն կողմը աշխարհի խաղաղու-
թեան համար որոշուած ազօթքները եղած
են մեծ քերմեռանդութեամբ: Ս. Քահանա-
յապետը ներկայ գտնուէր է նոյն օրը Ս.
Պետրոսի մէջ եղած արարողութեան:

* * * Փետր. 7ին կնքեց իր վաթսնամեայ
կեանքը Վսեմ. Կարգինալ Ս. Թէքքի որ մե-
ծամեծ ծառայութիւններ մատուցած է Ս. Ե-
կեղեցւոյ, Աստուած յաւիտենական հանգիստ
պարգեւէ Վսեմ. հանգուցային:

* * * Յիսուսեանց ընդհանուս ժողովը, Փե-
տրուար ամսուն, Հոռոմի մէջ գումարուեցաւ
եւ նոյն Կարգին Ընդհանուր Մեծաւոր ընա-
րեց Վերապատուելի Հայր Վլատիմիր Լէտո-
խովսքի, որ Կալիցիոյ հին եւ նշանաւոր կամ-
սական գերդաստանէ մըն է:

* * * Հոռոմին կը հեռագրուի Մարտ 1ին. —
Վատիկանի անգլ. ղեկավարատունը կը ծա-
նուցանէ թէ բրիտանական ծովապետութիւ-
նը որոշած է պաշտօնապէս ընդունիլ որ
զինուորական նաւահանգիստներու եւ անգլ.
նաւատորմին մէջ իբր քահանայ ծառային
անգլ. յաճանաւորութեան մէջ գտնուող հիւգ կա-
թոլիկէ քահանաներ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. —

Առաջիկայ կիրակի Մարտ 21ին Աւագ Թեմի
ինչ-պէս նաեւ ամբողջ Հայ Կաթոլիկէ Նուի-
րապետութեան եկեղեցիներուն մէջ տեղի
պիտի ունենան Ս. Քահանայապետին կողմէ
աշխարհի խաղաղութեան համար հրամայուած
ազօթքները:

Առաւօտը ժամը 9ին, ժողովրդական պա-
տարագէն յետոյ Ս. Հաղորդութիւնը ի բաղ-
մոցի պիտի գրուի եւ խնկարկութենէն յետոյ
պիտի երգուի Մ. Սաղմոսը:

Ամենաոտը Խորհուրդը օրն ի բուն ի
բաղմոցի պիտի մնայ:

Երեկոնը ժամը 4¹/₂ին ի միասին վարդա-
բան պիտի բաժնի, ապա խաղաղութեան հա-
մար Ս. Քահանայապետին շարադրած ազօթ-
քը, ամենայն սրբոց Լիթանիան, անոր յա-
րակից մի քանի ազօթքներ, Տէր ողորմեա՛,
Տէր ողորմեա՛ են. Սաղմոս եւ ամենէն վեր-
ջը Ս. Հաղորդութեան օրհնութիւն պիտի
արուի:

Այս ամէն ազօթքները թղթի վրայ տրու-
ուած են եւ հետզհետէ հաւատացելոյ կը բաշ-
խուին:

* * * Առաջիկայ Մարտ 15 երկուշաբթի օր-
ուրնէ սկսեալ մինչեւ 21 Մարտ կ'ըրակի օր,
Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ
մէջ թուրքերէն յեղուով կոթութեան քա-
րոզներ պիտի տրուին՝ նոյն եկեղեցւոյ մե-
ծաւոր Գեր. Աստուրեան Վ. ի կողմէ, հե-
տեւեալ կերպով.

Երեկոյեան ժամը 5.15ին վարդարան,
վարդարանէն հուրը քարոզ եւ օրհնութիւն:

Իսկ կիրակի օր, առաւօտեան ժամը 8¹/₂ին
պատարագի ժամանակ տեղի պիտի ունենայ
հաւատացելոյ համախումբ հաղորդութիւնը:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԴՈՐԾԵՐ. —

Թշնամի նաւատորմը կը շարունակէ ռաբա-
կոնէյ Տարտանէլի ամրոցները՝ առանց յաջո-
ղութեան:

Չանաք Բայէ, Մարտ 8. — Վոյֆի թրդ-
թակիցը, որ հոս կը գտնուի, հետեւեալ վա-
ւերական տեղեկութիւնները կը հաղորդէ.

«Մարտ 3ին թշնամին կարճ հեռաւորութենէ մը ուժանոթեց Բուժ Բալէի և Սէտ իւլ Պահրի արտաքին ամրոցները: Աւթ կամ տասը մարտանաւեր աւտուրնէ մինչեւ իրիկուն հազարի չափ ուժով արձակեցին: Ենթիշէնիք և Բուժ Բալէ ամբողջ օրը շրջապատուեցան բոցերով և ծուխով: Սակայն օսմ. հետեւակազօրքը քայլ մը իսկ չընկրկեցաւ: Թշնամի զօրքերու լիտքրաթիւ խումբեր իրենց թնդանօթներուն պաշտպանութեան ներքեւ յաջողեցան ցամաք ելլել: Օսմ. հետեւակազօրքը հրացանաձգութեամբ և ձեռնառումներով կրօուեցաւ անոնց հետ: Մարտանաւերէն եկող նաւազներ ցամաք ելլող զօրքերուն թիւը 40ի բարձրացաւ: Բայց օսմանցիներուն մահացու կրակին տակ հարկադրուեցան իրիկուն դէմ քաշուիլ: 70-80 հոգի կորուստ տալով: Օսմանցիները կրցան դիտել որ Անգլիացիք մուտաներ ծովը կը նետէին:»

*** Օսմ. ընդհ. բանակետէն Մարտ 11 թիւով կը զեկուցուի:

Ա. Կովկասի ճակատէն նոր տեղեկութիւն մը չեկաւ:

Բ. Թշնամի յաժանաւի մը և թորփիլահալածներու պաշտպանութեան ներքեւ քանի մը ակամահաւաք նաւեր երէկ գիշեր Տարտանէլի նեղուցին ակամաներու դին մօտենալ ուղեցին: Բայց մեր մարտիկներուն բուռն կրակին հետեւանքով ակամահաւաք նաւերէն մէկ քանին ընկղմեցան: Ասոր վրայ միւսները հարկադրուեցան քաշուիլ: Նեղուցին գէմը թողուած թշնամի երկու յաժանաւերը և քանի մը թորփիլանաւերը այսօր տակաւին ո՛չ մէկ ձեռնարկ ըրին:

Գ. Եղեական ծովին մէջ մեր մարտանա-

ւերուն կողմէ թշնամի փոխադրանաւ մը և երկու մարտանաւեր թորփիլուեցան:

* Օսմ. Ազգ. Դորձակալութեան Իզմիրի թղթակիցը կը հեռագրէ Փետր. 20ին. — (Հ. Տ.). «Թշնամի երեք մեծ մարտանաւեր այսօր ուժանոթեցին Իզմիրի ամրոցները և կէս ժամ ընդհատուածով մը 60 ուժով արձակեցին: Ռաբակոծումը ուժէ մնաց չպատճառեց: Ժողովուրդին ցոյց տուած հանդարտութիւնը, ինչպէս նաեւ զօրքերուն բարոյական վիճակը արժանի են ամէն գովեստի: Թշնամի մարտանաւերը չկրնալով ամրոցներուն մօտենալ, կրակ ըրին խիստ մեծ հեռաւորութենէ մը:»

* Իզմիրի կուսակալը մասնաւոր զեկուցում մը յանձնարարեց անգէն ժողովուրդին որ քաղքէն հեռանայ եւ երկրին ներսերը քաշուի:

* Թշնամի մարտանաւերը Մարտի սկիզբները ուժանոթեցին Տիքիլին, Բաբազլըքը, Սարմուքը և Ուրլան:

* Գերման Տեղեկատուութեանց Դիւանը Մարտ 11ին իր ստացած տեղեկութեանց վրայ կը հաղորդէ թէ մեծ ճակատամարտ մը տեղի ունեցեր է Շամբանի մէջ, մասնակցութեամբ Փրանս. ութը զօրաբանակի, որ ունեցեր են 45,000 կորուստ, 4000ը չվիրաւորուած զերի: Իսկ Գերմաններուն կորուստն է 15,000է պակաս: Փրանս. յարձակումը ետ մղուեր է:

* Հելլէն վարչապետ Մ. Վէնեզելոս հրաժարեցաւ:

Աֆիա 9. — Հելլէն նոր դահլիճը վերջնականապէս կազմուեցաւ Կունարիսի վարչապետութեան տակ: Նոր դահլիճը թագաւորին հաւանութեան արժանացաւ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն			
Դէպքեր եւ սկզբունքներ	65	Տրայիլոնցիք եւ իրենց եպիսկոպոսը	75
Հովուական բուրք	69	Գերանիսի երազը	76
Անոյ Ասուածէն (?) Ենօվայի ուրացումը	72	Տեղեկագրական	78

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԵՆ-ԽՄԱԳՐԱԳԵՏ

ԳԵՐԳ Ծ. Վ. ԲԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպարան Կ. Արմազանի Հասարակական, Բերք, Պոլսում քաղց օրէ 1. Կ. Գալիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արսասահ-
ման տար . ֆր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, Կ .
Պոլիս :

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1 .— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը : 2 .— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած : 3 .— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղին :
4 .— Ձեռագիրները ետ չեն դարձուիր : 5 .— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրկուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն : 6 .— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին : 7 .— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել :

Տարր . Սկզբունք Վրիտա . Վարդապետութեան . գին 2 դհկն .

Տէր Կոմիտաս Քահանային վարըր . գին 5 դհկն .

Եւթեր՝ ողբերգութիւն Ռաֆինի . Գին 3 դահեկան :

ՏԶԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ . 5 : Տպարանս ըստ ամենայ-
նի ճախ և ի վիճակի է : Եւ իցէ տպագրական գործոց համար : Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, զիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-տարէմներ,
մահազգներ, եւն . եւն . Գինները անմրցելի կերպով աման են : Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մօքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընեն :

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 42.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwillau:*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paievements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, natières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.